



Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



Հայաստանում ռեսուրսների արդյունավետ ու ավելի մաքուր արտադրության զարգացում

-ՌԱՄԱ մեթոդաբանություն-

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի համար ռիսկերը նվազեցնելու նպատակով: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունները՝ բարձրացնելով ընդհանուր արտադրողականությունը: **Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ)** համար ՌԱՄԱ մեթոդաբանությունն արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու և էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ներում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«ԷԼԲԱՏ» ՓԲԸ

- Տրանսպորտային միջոցների համար մարտկոցների և կուտակիչների արտադրություն -

Կազմակերպության մասին

Հասցե՝ Շարուրի փող. 37/29, 0043, Երևան

Հիմնական ապրանքներ՝ տրանսպորտային միջոցների համար նախատեսված մարտկոցների լայն ընտրանի

Աշխատակիցների քանակ՝ 52

Հիմնական շուկաներ՝ Հայաստան

Ստեղծման տարեթիվ՝ 2007

Սերտիֆիկացում՝ ISO 14001:2004, ISO 9001:2008




«ԷԼԲԱՏ» ՓԲԸ-ն բարձրորակ կապարաթթվային մարտկոցների առաջատար արտադրողն է: Ընկերությունն առաջարկում է մեքենաների և առևտրային տրանսպորտային միջոցների մարտկոցների լայն տեսականի՝ 40-100 Ա/ժ և 120-200 Ա/ժ, և տրամադրում է տեխնիկական ծառայություններն իր հաճախորդների համար՝ մարտկոցի լավագույն տարբերակն ընտրելու նպատակով: Ձեռնարկության տարեկան արտադրանքը՝ մոտ 15,000 մարտկոց: Իր բնապահպանական արդյունավետությունը բարելավելու և ռեսուրսների օգտագործումը (նյութեր, ջուր, էներգիա) օպտիմալացնելու դրդապատճառներով ընկերությունը 2017 թվականին միացել է «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) ծրագրին: Ծրագիրը համահունչ էր ԷԼԲԱՏ-ի բնապահպանական կառավարման համակարգին (ԲԿՀ), որի նպատակն է շրջակա միջավայրի վրա արտադրական համակարգերի բացասական ազդեցության և մարդկանց սպառնացող ռիսկերի նվազեցումը: «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի շնորհիվ ԷԼԲԱՏ-ում ՌԱՄԱ-ն այժմ ընդունված հայեցակարգ է և օգտագործվում է՝ բարելավելու ընկերության աշխատանքը՝ որպես իր ԲԿՀ-ի մաս: Այս հրապարակումն ընկերության փորձառության մասին է, որը զեկուցվել է 2021 թվականին իրականացված մոնիթորինգից հետո՝ ծրագրի ավարտից չորս տարի անց:

«Հետևելով նախագծի առաջարկներին, ի թիվս այլոց, մենք որոշեցինք նորից օգտագործել տաք ջուրը, որն առաջանում է մարտկոցի արտադրության ընթացքում: Թարմացնելով հովացման համակարգը՝ ջուրն ու ջերմությունը վերականգնելու համար, մենք կարողացանք կրճատել ծախսերը և խնայել այն ջուրը, որը նախկինում լցվում էր կոյուղաջրեր»,- **ասաց արտադրական գծի ղեկավար Աշոտ Պապյանը:**

Առավելություններ

- 5/7 RECP տարբերակների իրականացում (գումարած տնտեսվարման կանոնները՝ ընդհանուր էներգաարդյունավետությունը բարելավելու համար)
- Ընդհանուր տնտեսական խնայողություններ՝ 81,550 եվրո/տարի
- Ընդհանուր մարման ժամկետ՝ 2.5 տարի
- Մարտկոցի մեկ միավորի համար ռեսուրսների սպառման կրճատում՝ էլեկտրականություն՝ 2 % Բնական գազ՝ 4 % Ջուր՝ 16 %
- Կապարի թափոնների առաջացման կրճատում մեկ միավոր մարտկոցի համար՝ 11 %
- Արտանետումների կրճատում՝ 10տ/տարեկան CO₂
- Աշխատանքային առողջության և անվտանգության բարելավված միջոցառումներ (էներգիայի և թափոնների ավելի լավ կառավարում)
- Շրջակա միջավայրի բարելավման մեջ ներդրում (ԷԼԲԱՏ-ի ԲԿՀ-ի շրջանակում)

Action implemented by:



Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և հայտնաբերել լավ տնտեսվարության պրակտիկա և յոթ տարբերակներ, որոնք այնուհետև բաշխվել և ընդունվել են երեք բլոկներում:

ՌԱՄԱ տարբերակ 1: Էներգիայի ավելի արդյունավետ օգտագործում: Ընկերությունն իրականացրել է բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման կրճատման համակցված ծրագիր: Ջերմային խողովակաշարի ցանցի նորոգմամբ, կապարի ծուլման վառարաններում այրման գործընթացի կանոնավոր հսկողությամբ, արտադրական գործընթացի տաքացվող մակերեսների օպտիմալացման և տաք ջրամատակարարման ջերմային թափոնների վերականգնման միջոցով հասավ բնական գազի խնայողության: Էլեկտրաէներգիայի խնայողությունը՝ պարապուրդի ժամանակի կրճատում, լուսավորության հարմարեցում պահանջարկին և աշխատանքային կայանի պայմաններին, LED լամպերի օգտագործում և հովացրած ջրի վերաօգտագործում, այս ամենը ստեղծեց էներգիայի էական խնայողություն:

ՌԱՄԱ տարբերակ 2: Զրի վերաօգտագործման տարբերակներ: Կուտակիչների հովացման համակարգից ջրի հոսքերը վերականգնվել են ջրի փակ շրջանի միջոցով՝ խնայելով ջրի ծավալը և էներգիան, նվազեցնելով ջերմափոխանակման համար էներգիայի անհրաժեշտությունը:

ՌԱՄԱ տարբերակ 3: Նյութերի և թափոնների առաջացման կրճատում: Պլաստիկ թափոնները (օրինակ՝ պոլիէթիլենը, որը հավաքվում է կուտակիչի փաթեթավորումից) վերականգնվել և վաճառվել են վերամշակման համար: Հաշվի առնելով վտանգավոր թափոնները նվազեցնելու ընկերության պատրաստակամությունը՝ ամենակարևոր փոփոխությունը կապարի կորզման համակարգի ներդրումն էր, որը հեշտացնում էր կապարի արդյունահանումը տիղմից և գործառնություններից դեռ նետված մածուկներից և դրա վերադարձը արտադրական ցիկլ: Արդյունքում ամեն տարի 60 տոննա կապար վերաօգտագործվում է կա՛մ արտադրական գործընթացում, կա՛մ վաճառվում արտաքին օգտագործողներին:

Պահպանելով ձեռքբերումները

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ



Տարբերակ 1՝ Էներգիայի առավել արդյունավետ օգտագործում

Տարբերակ 2՝ Զրի վերաօգտագործման տարբերակներ

Տարբերակ 3՝ Նյութերի և թափոնների առաջացման կրճատում

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ



	Ներդրումներ (Եվրո)	Խնայողություն (Եվրո/տարի)
Տարբերակ 1՝	10,000	2,050
Տարբերակ 2՝	12,000	4,500
Տարբերակ 3՝	180,000	75,000
Ընդամենը՝	202,000	81,550

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



	Ջուր (մ ³ /տարի)	Նյութ (տ/տարի)	Թափոններ (տ/տարի)	Էներգիա (կՎտժ/տարի)
Տարբերակ 1՝	-	-	-	32,000
Տարբերակ 2՝	1,500	-	-	-
Տարբերակ 3՝	-	2	60	-
Ընդամենը՝	1,500	2	60	32,000

Այլ հնարավորություններ

Ընկերությունը կծգտի իրականացնել առաջարկվող ՌԱՄԱ միջոցառումները, որոնք եղել են ավելի վաղ գնահատման մեջ: Ինֆրակարմիր ջեռուցման և բարձր արդյունավետ տրանսֆորմատորների տեղադրման նման տարբերակներն ավելի համապարփակ վերլուծության կարիք ունեն՝ դրանց տնտեսական և բնապահպանական իրագործելիությունը հաստատելու համար: Մյուս կողմից, մոնիթորինգի իրականացման շնորհիվ գնահատման փուլում է 500 կՎտ անվանական հզորությամբ ՖՎ արևային համակարգի տեղադրման հնարավորությունը: Տարեկան ծախսերի խնայողության ներուժը կկազմի 38,000 Եվրո/տարի՝ այդպիսով 61%-ով նվազեցնելով ցանցի էլեկտրաէներգիան: Այս տեխնոլոգիայի մեջ ներդրումները Հայաստանում արագ վերադարձ չունեն, քանի որ մարման ժամկետները կազմում են մոտավորապես յոթ տարի: Այնուամենայնիվ, այն ապահովում է վերականգնվող էներգիայի աղբյուրներին հասանելիությունը առնվազն 20 տարի: Ընկերությունը պետք է դիտարկի այս միջոցառումներն ապագա գործողությունների համար, քանի որ այն նաև աշխատում է իր բնապահպանական կառավարման համակարգի (ԲԿՀ) վրա, որի համար ՌԱՄԱ-ն ներառվել է որպես բնապահպանական արդյունավետությունը բարելավելու կանոնավոր գործիք:

Այս իրապարակումը լույս է տեսել Եվրոպական միության աջակցությամբ: Հրապարակման բովանդակությունը բացառապես ՄԱԿ ԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մաս՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) (2013-2017) և «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» (2019-2022), որոնք իրականացվել են ՄԱԿԱԶԿ կողմից: Այս համատեքստում «EAPUS» ՓԲԸ-ն միացել է ՌԱՄԱ ուսուցման ու աջակցության ծրագրին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի և մշտադիտարկվել է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում՝ ստուգելու իրականացված ՌԱՄԱ տարբերակները «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) ծրագրի ավարտից հետո: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանելու իրենց բնական կապիտալն ու բարձրացնելու մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցություններն ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Ավելին իմանալու համար այցելե՛ք www.eu4environment.org:



Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպություն
Տիկին Տատյանա Չերնյավսկայա
ԵՄ-ն շրջակա միջավայրի համար Ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
Էլ: t.chernyavskaya@unido.org



Կովկասի ՏԲԿ
Հայաստանի ազգային գրասենյակ
Այգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374 115 75 148